

Ա Լ Բ Ա Տ Ր Ո Ս

Բազում անգամ նաւաղներն ըզրօնեւրու ի խնդիր՝
Աւրատրոսներ կը բռնեն, մեծ թռչուններ ծովերու,
Որոնք՝ անխոյժ ընկերներ ճանապարհի՝ թեւ ի թիւ
Անդունդներու վրայ սահող կը հետեւին նաւերու:

Տախտակամած զետնին վրայ հաղիւ զանոնք են դըրեր՝
Արքաներն այս կապոյտին, ամօթապա՛րտ, անճարա՛կ,
Ողորմաղին կը թողուն ընդ քարշ ածել զերդ թիւեր
Իրենց երկու կողերուն՝ մեծղի թեւերն ըսպիտակ:

Ուղեւորն այս օղաչու ի՛նչ տըկար է, ճախաւեր,
Ինք՝ նախ ա՛յնքան զեղեցիկ, այժմ ինչ տըկե՛ղ, ծաղրալի՛,
Մին՝ կը կապկէ կաղալո՛ւ զինք՝ որ առաջ կը թեւէր,
Ծրխամորճով կըտուցի՛ն հետ միւսն ահա կը զբաղի:

Որ որտորդին է հեղնող, փոթորիկին ընտանի,
Նւ բանաստե՛ղծն իշխանին կը նըմանի ամպերու.
Ունոցներու՛ մէջ դաժան, աքսորակա՛ն վրայ երկրի,
Ո՛հ, հսկայի կ'արդիւն թեւերն իրեն քալելու:

հոտմ, 1946

Կ Ո Յ Ր Ե Ր Ը

Դիտէ՛ զանոնք, ո՛ւ վ հողիս, սոսկալի ե՛ն իսկապէս,
Տարտամօրէն ծաղրաշարժ խրտուելակներ՝ են կարծես.
Ձարհուրելի, եղական, քընաշըջիկ զերդ մարդեր,
Գունդերն իրենց մըթապատ յառելով ո՛ւր՝ չե՛ս զիտեր:

Աչքերն իրենց ուրկէ խո՛յս կայծն երկնային է տըւած,
Կարծես հեռուն նայէին՝ կը յամենան վերամբարձ
Դէպի երկինք, չես տեսներ զանոնք երբեք՝ որ զետին
Գըլուխն իրենց ծանրացած վայրահակէ՛ն ցնորաղին:

Այսպէս կ'անցնին ընդմէջն անոնք մութին անսահման,
Յաւերժական լրտութեան եղբայրն այս, մինչ ո՛ւր ոտտան,
Կ'աղաղակես զուն մեր շուրջ, կը ծիծաղիս, ու կ'երգես:

Անդրթութեան աստիճան հաճոյաւառ, ահա տե՛ս
Ընդ քարշ կ'ածեմ ես ալ զի՛ս, բայց քան զանոնք ապշօրէ՛ն,
Ինչ կ'որոնեն երկնից մէջ, կ'ըսեմ, կոյրե՛րն այս ամէն:

հոտմ, 1946

Թարգմանեց՝ ՀՐԱՉ ՔԱՋԱՐԵՆՑ

ԷԶՄԻԱԾՆԻ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

1655 ԹՈՒԱԿԱՆԻՆ

(Շար. տես Բազմ. 1948, թ. 7-8, էջ 157)

Գ.

Երեկոյեան ժամերգութիւնները վերջա-
նալուն՝ Հայրապետը զիս փնտռել տուաւ
ըսելու համար՝ որ այդ օրը միւսներէն
աւելի զուարճանալու սովորութիւնը,
որքան ալ անոնք չունէին, սակայն և
այնպէս աղէկ զիտնալով որ Եւրոպացի
Քրիստոնեաները մեծ խրախճանութիւն-
ներ կ'ընեն, ինքն ալ ուստի կ'ուզէր որ
թէ ես և թէ ի Քրիստոնեայ երկիրները
գնացող վաճառականները գոմիշամարտի
մը տեսարանով զուարճանայինք:

Այդ կենդանանիւնները բազմաթիւ են այդ
երկրին մէջ, ուր հողագործութեան կը
ծառայեն: Անոնց էգերն ալ առատ կաթ
կու տան, որմէ՛ զայն ուրիշ կաթերու հետ
խառնելով, կարագ և պանիր կը պատրաս-
տուի:

Այդ կոկը տեսնելու համար գմեզ շըր-
ջապատուած տեղ մը տարին, ուր ութը
գոմէշներ կային:

Չանոնք իրար դէմ զայրացնելու հա-
մար կարմիր լաթ մը անոնց ցոյց տուին,
որմէ իսկոյն այն աստիճան կատղեցան
որ կոտորներու առաջին հարուածներուն՝
երկու հատը արդէն գետին ինկան փռուե-
ցան: Վերջ ի վերջոյ անմէքն ալ խե-
ղանդամ մնացին:

Կոկը լմնցածին պէս մեծ քանակու-
թեամբ փայտեր բերին, զանոնք իրարու
վրայ դիզելով, որպէս զի կրակը տրուի,
ինչպէս Ս. Յովհաննէսի տօնին զիշերը
Պրանսայի մէջ սովորութիւն է ընել:

Փայտերը շեղջ առ շեղջ երբոր շարուե-

ցան՝ Արքեպիսկոպոսներէն մին բոլոր ներ-
կաներուն ճերմակ մեծ մոմ մը տուաւ,
տէրերուն ինչպէս նաեւ անոնց սպասա-
ւորներուն, որոնք յայտնեցին անոր թէ
հետեւեալ օրուան մոմեղէններուն լուսա-
ւորութեան համար ի՛նչ տրամադիր էին
տալ: Մոմերը վառուեցան. իւրաքան-
չիւրը իրեն մոմը ձեռքին մէջ բռնած էր:
Հայրապետը, եպիսկոպոսական գաւազանը
ձեռքը, շարական մը երգելով սկսաւ
քալել:

Եկեղեցական և աշխարհական, ամէնքն
ալ անոր հետեւելով, շեղջալիցայ այդ դէ-
զին բոլորտիքը երեք անգամ շըջեցան:

Բայց որովհետեւ խնդիրը անոր կրակը
տալու մէջ կը կայանար, վաճառական-
ներէն մին՝ այդ պատիւը ունենալու հա-
մար, ըսաւ թէ պատրաստ էր մեծ քանա-
կութեամբ ձէթ տալ Եկեղեցւոյն կանթեղ-
ներուն համար: Երկրորդ մը եկաւ անոր
տալիքէն աւելի խոստանալու: Երրորդ մը
այս վերջինիս նուիրածէն դեռ աւելի տա-
լու յօժար էր: Վերջապէս՝ կրակը տալու
պատիւը ամենաշատ նուիրողին մնաց:

Ասոր վրայ ամէն մարդ իր մոմը
մարեց, մեծ խնամքով զայն պահելու դի-
տաւորութեամբ. որովհետեւ անոնք ան-
երկբայ վստահութիւնը ունին որ ծովուն
վրան գտնուած ատեննին, երբոր փոթորիկ
մը հանդիպի, այդ մոմերէն հատ մը վա-
ռելով և աղօթք մ'ալ զուրցելէն յետոյ,
եթէ զայն ծովը նետէին, մըրիկը իսկոյն
կը զաղէր:

Հետաքրքրութեան համար անոնց հար-
ցուցի թէ կրակին և մոմերուն այդ արա-